սեր (867–886) յարաբերութեան(1) թէ չփոթութիւն է Աշոտ պատրկի անուան հետ կապուած պատմութեան. աւելացնենք, որ Աշոտ Գ. Ողորմածի անունով էլ կան խաչերի և կեղծ վաւերագրերի աւանդութիւններ։ Բայց Թովման այս տեղեկութիւնը չի քաղում անմիջապէս գրաւոր աղբիւրից, այլ նրանց վերայ եղած բերանացի աւանդութիւններից, ուստի և պատմական տեսակէտով պակաս արժէքաւոր։

Աղբիւրների այսպիսի վերլուծութիւնից և համեմատութիւններից յետոյ՝ պարզ է, որ Հաւուց Թառի սրբութեան ծագման եւ Հայաստան բերուելու երեք աղբիւր ունինք՝ Վանականի հակիրճ տեղեկութիւնից զատ. արձանագրութիւնը, շարականը եւ մի անյայտ աղբիւր Վասիլ արքայի և Գորգ իշխանի յիշատակութեամբ։ Առաջին և վերջին աղբիւրների ժամանակագրութիւնն իրար չեն հակասում. պէտք է պարզել միայն, թէ «Զորս ըստ պատկերի» շարականը Աշոտ Պատրիկի՞ն է, ինչպէս ընդունում է Վարդան պատմիչ և Նորագոյն բանասէրներից ոմանք, թէ Գրիգոր Մագիստրոսինը։

Եթէ համեմատելու լինինք շարականը արձանագրութեան հետ, շատ մեծ աղերս կ'գտնենք նրանց մէջ. շարականի մէջ պարզ արտայայտուած է այն միտքը, որ հեղինակը նորոգել է մի տաճար՝ «զնորոգեալս է մէնջ զտաճարս ընկալ քեզ ի բնակութիւն», որ միանգամայն համապատասխան է արձանագրութեան «վերստին նորոգեցաք», «և նորոգեալ հաստատեցաք զսուրբ ուխտս» խօսքերին։ Շարականի հեղինակը չեշտում է նոյն իսկ իւր չինած կամ նորոգած տաճարի առաւելութիւնը կամ պայծառութիւնը առաջնի համեմատութեամբ. «որ զվերջինս զայս հրաշազարդեցեր քեւ չափ բնակցութեամբ հիմնափայլեցեր, ըզպանծալի եւ զփայլեալ փառս տանս այս վերջինս քան զառաջինն»։ Աւետիքեանի բացատրութիւնը(2) հին և նոր ուխտի, այսինքն քրիստոնէական և հրէական եկեղեցիների համեմատութեան իմաստով, անտեղի է եւ անհամապատասխան շարականի ամբողջական բովանդակութեան։ Բառացի նոյն են նաև արձանագրութեան «աստ եդաք զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ» եւ շարականի «ուր եդին զվէմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցւոյ» խօսքերը, միայն այն տարբերութեամբ, որ շարականի «ուր եդին» Բիւզանդիան է ակնարկուած, իսկ արձանագրութեան «աստ եդաք» Հաւուց Թառի տաճարը։

Արդ, ի՞նչպէս հասկանալ այս յարաբերութիւնը։ Կոստանեանց(1) արձանագրութեան այս նմանութիւնը բացատրում է փոխառութեամբ շարականից, որի հեղինակ, սակայն, Աշոտ պատրիկն է ընդունում, որ անյարիր է և անհասկանալի։ Շարականը նուիրուած է մի նորոգուած և ո՛չ նոր շինած տաճարի նաւակատեաց տօնին(2), ինչպէս Աշոտ պատրկի հիմնած Դարիւնից եկեղեցին էր. սա մի շատ կարևոր հանգամանք է, որ չպէտք է վրիպէ մեր ուշադրութիւնից շարականի ծագման ժամանակը որոշելու խնդրում։ Հասկանալի չէ նաև, թէ ինչո՞ւ Մագիստրոսը իւր արձանագրութիւնը գրելու համար փոխ պիտի առնէր շարականի խօսքերը, մանաւանդ, եթէ նա միայն արտաքին չէնքի փառաւորութիւնը կամենար յայտնել. այդ նմանութիւնը երկու գրութեան մէջ ներքին, հոգեբանական կապակցութիւն է մատնանշում, երկու գրութիւնների հեղինակի նոյնութեամբ հասկանալի և ոչ սովորական գրական փոխառութեամբ։ Արձանագրութեան հեղինակի վերստին նորոգած ուխտը առաւել է, քան առաջինը, որովհետև այնտեղ է դրել «զվէմն հաւատոյ» որ Քրիստոս ներկայացնող պատկերն է. ճիշդ այդպէս է մտածում և շարականի հեղինակը իւր նորոգած տաճարի համար։ Ահա իսկական պատճառը երկուսի նմանութեան։

Բայց աւելին կայ. շարականի բովանդակութիւնն էլ միանգամայն համապատասխան է Գրիգոր Բ-ի նեցու բնաւորութեան և հոգեբանութեան. ինչպէս արձանագրութիւնը, այնպէս էլ շարականը գրուած է նորակեանքի այնպիսի մի շրջանում, երբ նա բիւզանդական բարձր պաշտօնեայ էր, այսինքն Բագրատունեաց անկումից յետոյ.

(1) Մոսկուա. 1861. 116. Ցայսմաւուրքից առնուած, հաւանօրէն։

(2) Բացատրութիւն Շարականաց. 1844. Վենետիկ, 521-524։

(1) Արարատ. 1897. Յուլիս «Հին Ցիշատակներ»։

(2) Ամբողջութիւնը տ. Շարական. Էջմ. 1861. 495։